ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝+37491700974,**Էլ. հասցե՝**foi@foi.am, **www.foi.am**

14.08.2023
351-43

Էկոնոմիկայի նախարար
Վահան Քերոբյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Քերոբյան,

Ամերիկյան The New York Times-ի՝ այս տարվա ապրիլի 18-ի հրապարակման մեջ Ռուսաստան երկակի նշանակության ապրանքներ, տվյալ պարագայում կիսահաղորդիչներ (կոդեր 8517 և 8534) (վերա)արտահանող երկրների ցանկում հիշատակվում է նաև Հայաստանը: ԱՄՆ Արդյունաբերության և անվտանգության բյուրոյի կնիքով փաստաթղթում, որը հիշատակում է թերթը, ասվում է, որ 2022 թվականին Հայաստանը 515%-ով ավելի շատ չիպեր և պրոցեսորներ է ներմուծել ԱՄՆ-ից և 212%-ով ավելի շատ Եվրամիությունից, քան 2021 թվականին: Այնուհետ, ըստ հրապարակման, Հայաստանը նույն արտադրանքի 97%-ն արտահանել է Ռուսաստան:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ աշխատանքներ են տարվում ԱՄՆ-ի և Եվրամիության պատասխանատու պաշտոնյաների հետ արևմտյան պատժամիջոցների կամ դրանք շրջանցելու խնդրի շուրջ ծագող անհանգստությունները փարատելու համար:

2. Ի՞նչ աշխատանքներ են տարվում հայկական բիզնես շրջանակների հետ, որպեսզի նրանք չհայտնվեն պատժամիջոցների թիրախում, եթե միաժամանակ ակտիվ բիզնես գործունեության մեջ են ռուսաստանցի, ամերիկացի կամ եվրոպացի իրենց գործընկերների հետ:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը օգոստոսի 1-ին լրատվամիջոցներին ասել է, որ Հայաստանի կառավարությունն «ամեն ինչ անում է, որ Հայաստանի ընկերությունները չընկնեն երկրորդային պատժամիջոցների տակ»: Ըստ այդմ նա հիշեցրել է կառավարության որոշման մասին, որով 38 վեցանիշ ապրանքների նկատմամբ սահմանել է արտահանման վերահսկողություն:

3. Ի՞նչ որոշման մասին է նախարար Վահան Քերոբյանը հիշատակում, ըստ որի, ինչպես ինքն է ասում, «38 վեցանիշ ապրանքների նկատմամբ սահմանել է արտահանման վերահսկողություն»:

4. Ինչպե՞ս է այս հարցը կարգավորվել ԵԱՏՄ գործընկերների հետ, քանի որ խոսքը փաստացի միասնական մաքսային և առևտրա-տնտեսական տարածքում արտահանման պատնեշի կիրառման մասին է:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան